ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2011 թվականի թիվ 171 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգիրք>> օրենսգրքի 5-րդ հոդվածով և 2010 թվականի հունիսի 24-ին ընդունված <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով

որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող 2832.17 հա գյուղատնտեսական նշանակության, պետական սեփականություն հանդիսացող բաժանելի հողատարածքները /իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2740999/, որոնք ընդգրկվել են Հաղարծին, Կիրանց, Ներքին Ծաղկավան, Սևքար և Ոսկեպար համայնքների վարչական տարածքներում, բաժանել 811.259 հա, 830.691 հա, 626.881 հա, 13.716 հա և 549.624 հա մակերեսներով հողամասերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

24 նոյեմբերի 2011թ.
ք. Իջևան